

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2024-2-1-Ա

ք. Երևան

19.02.2024թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2024 թվականի փետրվարի 19-ի նիստում քննարկեց 2024 թվականի հունվարի 17-ին «Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ ընկերության դիմումը «LAVASH RESTAURANT» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ ԱԾՄԴ 43-րդ դասի «ռեստորան» ծառայության համար:

Կոլեգիայի նախագահը դիմումի նախնական քննարկման արդյունքները ներկայացնելիս նշեց, որ դիմումին կից ներկայացված փաստաթղթերում և հիմնավորումներում կան բավարար տեղեկություններ, որոնք ցույց են տալիս, որ «LAVASH RESTAURANT» ապրանքային նշանը օգտագործման արդյունքում 01.01.2021 թվականի դրությամբ բավականին ճանաչում է ստացել Հայաստանի Հանրապետության տարածքում «ռեստորան» ծառայության համար: Ելնելով վերը նշվածից կոլեգիան եկել է այն եզրակացության, որ «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի համաձայն «LAVASH RESTAURANT» ապրանքային նշանը կարող է հանրահայտ ճանաչվել ՀՀ-ում 2021թ. հունվարի 1-ի դրությամբ ԱԾՄԴ 43-րդ դասի «ռեստորան» ծառայության համար: Մյուս կողմից բողոքարկման խորհրդի որոշ անդամներ կարծում էին, որ «LAVASH RESTAURANT» ապրանքային նշանը հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումի մեջ բերված «ռեստորան» ծառայությունից օգտվողների քանակը այնքան մեծ չէ վերը նշված ապրանքային նշանը հանրահայտ ճանաչելու համար:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի մայիսի 26-ի N774-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհրդում բողոքների, դիմումների և առարկությունների քննարկման կարգի» 82-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝

բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում՝ 6 կողմ և 3 դեմ ձայների հարաբերակցությամբ

Ո Ր Ո Շ Ե Ց

«Հայր և որդի Երեմյաններ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «LAVASH RESTAURANT» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետությունում 2021թ. հունվարի 1-ի դրությամբ հանրահայտ ճանաչելու վերաբերյալ դիմումը բավարարել՝ 43-րդ դասի «ռեստորան» ծառայության համար:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ